

Թիւն նկարագրելով Սոսյ վանքին վիճակը՝ սենեակներուն փլված ըլլալը, վանքին շուջը դանուսդ մեծ պարսպապատին կիսովին փլած ըլլալը և այլ կարեւոր նորոգութիւններ, որոնք անհրաժեշտ են, մանաւանդ ձմրան սա եղանակին մէջ, հաշիւ մը ներկայացուցած է, որուն ամբողջ գումարը կը յանդի մօտ 20-22,000 ոսկիի: Եւստի ժողովը իր վերջին նստին մէջ թէ և կարդաց այս նամակը և ինքն ալ ընդունեց պէտքը այդ նորոգութիւններուն, սակայն առ ի չգոյէ նիւթական միջոցներու, առ այժմ որոշեց նպատակեց Յանձնաժողովոյն կողմէ հաւաքուած և Կիլիկիոյ վանքին համար բարեխէր ազգայիններէ նուիրուած դրամէն, որ պահ տրուած է Քաղ. ժողովոյ անդամ և ծանօթ դրամատէր Արշակ էֆ. Քարակէօզեանի քով, 900 ոսկի զրկել Ն. Ս. Օճու թեան՝ Պատրիարքական գրով մը:

Ե Գ Ի Պ Տ Ա Հ Ա Յ Ք

Հայկական Բ. Ը. Միութիւնը. Հայկ. բարեգործական ընդհ. Միութեան գեկտ 6ի նիստին առթիւ մեր ստացած տեղեկութեանց նայելով, կը յուսացուի որ Միութիւնը, գործադրուած ջանքերու շնորհիւ, շատ չանցած Եւրոպական և Ամերիկեան հայաբնակ կեդրոններու մէջ Մասնաճիւղեր պիտի ունենայ:

Աւրախ եմք որ Կիպրոսի փոքրութիւ հայ գաղութը ամենէն առաջ կը շարժի. տեղւոյն Հայուհեաց ընկերութիւնը խոստացած է Միութեան՝ տարին 600 դուրուշ նպատակ տալ, որով պիտի կրնայ ընդհանուր ժողովին մէջ ձայն ունենալ:

— Նախապէս հրատարակած էինք, թէ Փարիզէն Միութեան 400 եգիպտական ոսկի նուէր մը տրուած էր իբր Մուաբի վճարում: Կ'իմանանք թէ, նուիրատուն՝ այսի Տիկին Լ. Քալիմաճեանն է (քոյր Վոեմ. Պօղոս փաշա նուպարի):

Եգիպտացեանի ուրիշ հայ անձնաւորութիւն մըն ալ խոստացած է 300 եգիպ. ոսկի մուաբի տօմո նուիրել:

Գանիրէի ազգայիններէն Պետրոս էֆ. Կարապետեան, որ ինչպէս գրեցինք 600 ոսկի նուիրել խոստացած էր Վանոյ երամեան վարժարանին, որոշած է այդ գումարը մաս առ մաս զրկել, այսինքն ամէն տարի հարիւրական ոսկի: